



«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Տարրական Մաթեմատիկական պատկերացումների զարգացումը նախադպրոցական տարիքում

**Դաստիարակ՝ Գայանե Գասպարյան
Մանկապարտեզ՝ «Արևիկ» ՀՈԱԿ**

2022թ.

Բովանդակություն

Ներածություն.....	3
Գլուխ 1. Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը նախադպրոցական տարիքում.....	5
1.1. Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը (2-3 տարեկան) երեխաների համար.....	5
1.2. Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը 3-4 տարեկան երեխաների համար.....	6
1.3. Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը (4-5 տարեկան) երեխաների համար.....	6
1.4. Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը (5-6 տարեկան) երեխաների համար.....	7
Գլուխ 2. Պարապմունք.....	9
2.1. Թեմա՝ «Օրացույց».....	9
2.1. Աշխատանք ծնողների հետ.	12
2.2. Դիտարկումներ.....	12
Եզրակացություն.....	14
Գրականության ցանկ.....	15

Ներածություն

Տարրական մաթեմատիկական պատկերացումների ուսուցումը մանկապարտեզում երեխաների մտավոր կարողությունների զարգացմանը նպաստող և գիտելիքների որոշակի համակարգ ստեղծող գործընթաց է: Այն առարկաների հարաբերակցության, հատկանիշների, թվերին, երկրաչափական պատկերների և դրանց հետ կապված գործողությունների ուսումնասիրություն է և միաժամանակ երեխաների աշխարհընկալումը զարգացնող ինքնատիպ միջոց:

Տարրական մաթեմատիկական պատկերացումների ուսուցումը զարգացնում է երեխայի լեզվամտածողությունը, տրամաբանությունը, ստեղծագործական մտածողությունը:

Պարապմունքների ձևով իրականացվող ուսուցման միջոցով, երեխաները տիրապետում են որոշակի գիտելիքների ու կարողությունների, որոնք չեն կարող յուրացնել ինքնաբուխ խաղերի, մեծերի հետ ամենօրյա հաղորդակցման և ինքնուրույն գործունեության ընթացքում: Մաթեմատիկայի պարապմունքներ ժամանակ կիրառվում են զանազան մեթոդներ՝ բառային, դիտողական, գործնական, խաղային: Դիդակտիկ զննական, բաշխիչ նյութերը միջոց են երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքները ավելի արդյունավետ կազմակերպելու համար:

Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման պարապմունքներ ժամանակ օգտագործվում են նաև ուսուցման փոխներգործուն, ինտերակտիվ մեթոդներ, որոնք համահունչ են ուսուցման սկզբունքներին, պարապմունքներ անցկացման ցանկում ներառում են նաև ինտեգրված պարապմունքները:

Թեմա՝

- Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը նախադպրոցական տարիքում.

Նպատակը՝

Ուսումնասիրելով ու մշակելով թեման ուզում եմ տեսնել թե ինչ օգուտ է հետապնդում տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման պարապմունքները մանկապարտեզում:

Վարկած՝

Եթե տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման պարապմունքների կազմակերպման արդյունավետ ճանապարհը խաղային ուսուցման կիրառումն է, ապա դիդակտիկ խաղերը պետք է ընդգրկել պարապմունքի մեջ՝ որպես ծրագրային խնդիրների իրականացման միջոց, որովհետև խաղը կարող է օգտագործել որպես ուսումնական առաջադրանք, վարժություն՝ ուղղված պարապմունքի խնդիրների իրականացմանը:

Հետազոտական աշխատանքի ուսումնասիրության միջոցով ես ուզում եմ ինձ համար վեր հանել ավելի արդյունավետ տարբերակներ մաթեմատիկական պարապմունքներ ժամանակ իմ առջև դրված խնդիրները ճիշտ կատարելու համար:

**Գլուխ 1. Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը
նախադպրոցական տարիքում**

**1.1. Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը (2-3
տարեկան) երեխաների համար**

1. Քանակ

Զարգացնել՝ շրջապատող միջավայրում «մեկ» և «շատ» առարկաներ տեսնելու, առանձնացնելու, «որքա՞ն է» հարցին պատասխանելու կարողություն.

Ձևավորել՝ «մեկ» և «շատ» առարկաներ լսողությամբ և շարժումներով ընկալելու հմտություն.

Շրջապատում, նկարներում և գրքերում դիտել և մեծի օգնությամբ անվանել «մեկ» և «շատ» առարկաներ, հետևել, որ բառը ճիշտ հասկանան և իմաստով տեղին օգտագործեն:

Մեծություն

Ձևավորել՝ առարկաները և դրանց պատկերները համեմատելու կարողություն.

Կարողանալ տարբերել հակադիր չափերի առարկաները և խոսքի մեջ դրանց տարբերությունը՝ (մեծ տում, փոքր տնակ, մեծ գնդակ, փոքր գնդակ):

Հաղորդել առարկաների գույնի, քանակի, մեծության և տարածական կողմնորոշումների մասին տեղեկություններ :

Ձև

Սովորեցնել տարբերել առարկաներն ըստ ձևի և անվանել դրանք:

Կողմնորոշում տարածության մեջ.

Զարգացնել՝ առարկան տարածության մեջ որոնելու և գտնելու տարածական կողմնորոշումներ:

Սովորեցնել գտնել խաղասենյակը, լվացարանը, հանդերձասենյակը:

Ընդլայնել երեխաների գիտելիքները սեփական մարմնի մասերի անվանումները և կողմնորոշման վերաբերյալ:

Միաժամանակ մասնակցել դաստիարակի կատարած գործողություններին:

1.2. Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը 3-4 տարեկան երեխաների համար

3-4 տարեկան երեխաների համար մաթեմատիկայի պարապմունքները կազմակերպվում են II կիսամյակից: Այն իր մեջ ընդգրկում է հետևյալ բաժինները՝

1. Քանակ
2. Մեծություն
3. Տարածության մեջ կողմնորոշում
4. Ժամանակի մեջ կողմնորոշում:

Այս տարիքային խմբում ուսուցումը կրում է խաղային բնույթ: Խաղ-պարապմունքները յուրօրինակ խաղեր են, որոնք պետք է անցկացվեն գրավիչ, զգացմունքային և ջերմ մթնոլորտում:

1.3. Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը (4-5 տարեկան) երեխաների համար

4-5 տարեկան երեխաների համար տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման պարապմունքները ներառում է 5 կրթական բաժիններ:

1. Քանակ և հաշիվ
2. Մեծություն
3. Ձև
4. Տարածության մեջ կողմնորոշում
5. Ժամանակի մեջ կողմնորոշում:

Յուրաքանչյուր բաժին ընդգրկում է տարբեր բնույթի և բարդության առաջադրանքներ, որոնք ուսուցանվում են բազմաբովանդակ, մատչելի վարժությունների, խաղային բնույթի պարապմունքների օգնությամբ:

1.4. Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը (5-6 տարեկան) երեխաների համար

Այս տարիքային խմբում տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման ուսուցումը տարբերվում է դպրոցում անցկացվող ուսուցումից: Մանկապարտեզում կարևորը երեխաների ձեռք բերած մաթեմատիկական գիտելիքների վերջնական արդյունքն է, որի համար դաստիարակը յուրաքանչյուր պարապմունք ժամանակ օգտագործում է զանազան մեթոդներ:

1. Բառային (բացատրում, պատմում, հարցեր)
2. Դիտողական (առարկայի, նկարի ցուցադրում, երկրաչափական պատկերներ և մարմիններ)
3. Պրակտիկ (աշխատանք անհատական նյութերով)
4. Խաղային (դիդակտիկ, զարգացնող, զվարճալի, մրցակցային)
5. Գրաֆիկական առաջադրանքներ:

Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը նախադպրոցական բոլոր տարիքային խմբերում ունի մի հիմնական նպատակ՝ նախադպրոցականին սովորեցնել հաշվել, չափել, համեմատել, տարրական մաթեմատիկական գործողություններ կատարել, բացահայտել շրջապատող առարկաների մեծության հատկանիշները, երկրաչափական պատկերները սովորելուն, նպաստել հատկապես մտածողության զարգացմանը: Քանի որ տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը մանկապարտեզում ունի շարունակական բնույթ՝ ապա մաթեմատիկայի պարապմունքներից դուրս՝ ազատ ժամանցի, զբոսանքի, խաղերի ժամանակ երեխաներին առաջարկվում է լրացուցիչ առաջադրանքներ:

Հետազոտման ժամանակ աշխատել են ավագ խմբում ուսումնասիրել են տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը տարիքային բոլոր խմբերում: Օգտվել են համալիր ծրագրերից: Պարապմունքի պլանը գրել են Սյուզան Չիբուխյանի

- «Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման պարապմունքները մանկապարտեզի ավագ խմբում» ուսումնամեթոդական

ձեռնարկից: Պարապմունքը վարել եմ մենակ, պարապմունքը լսում էին տնօրենը
և մեթոդիստը: Պարապմունքի տևողությունը 30 րոպե:

Պարապմունքին ներկա էին 27 երեխա: Պարապմունքը անցկացրեցի մեծ
խմբերով, անհատական, փոքր խմբերով, օգտագործեցի նաև խորանարդի մեթոդը:

Գլուխ 2. Պարապմունք

2.1. Թեմա՝ «Օրացույց»

Խնդիրները՝ - Ծանոթացնել օրացույցի բաժանմունքներին՝ շաբաթ, ամիս, տարվա եղանակներ, օրեր:

Ամրապնդել շաբաթվա օրերի, տարվա 4 եղանակների, 12 ամիսների յուրաքանչյուր եղանակին համապատասխան ամիսների քանակի և դրանց հաջորդականության մասին հասկացությունները:

Սովորեցնել տարին (շրջանը) բաժանել 4 մասի (4 եղանակների) ու այդ մասերը միացնելով ստանալ ամբողջ:

Ամրապնդել 6-ի սահմանում թվերի համեմատման կարողությունները: Զարգացնել տրամաբանությունը և ուշադրությունը:

Անհրաժեշտ պարագաներ.

Ցուցադրական նյութեր՝ - օրացույցների տարբեր տեսակներ (տարեկան, թերթերը շրջվող, գրպանի և . . .)

Բաշխիչ նյութ՝ - երկրաչափական պատկերներ, օրացույցի տեսականի, գունավոր թղթեր, շրջան:

Պարապմունքի ընթացքը

Սեղանների շուրջ նստած երեխաների առջև դնել տարբեր օրացույցներ: Հնարավորություն տալ դիտարկելու դրանք և կարծիքներ փոխանակելու:

- Ինչպե՞ս են անվանում այն, ինչ այժմ դիտում ենք.
- Ինչի՞ համար են անհրաժեշտ օրացույցները.
- Ի՞նչ կարելի է իմանալ դրանց միջոցով.

Կռահենք հանելուկներ.

Նա քեզ չի ասի

Ոչ մի շաբաթ, ոչ մի օր,

Թե նրանից չպոկես

Դու օրական մի կտոր:

(օրացույց)

Այն ի՞նչն է, որ . . .

Թերթիկ – թերթիկ վազեց գնաց,

Պատին միայն հետքը մնաց:

(օրացույց)

Ինչպիսի՞ օրացույցի մասին է հանելուկը (պոկվող թերթերով):

Ցուցադրել պատի օրացույցը: Նշել, որ բոլոր թվանշանները դասավորված են սյունակներով:

- Այսօր շաբաթվա ո՞ր օրն է, ո՞րն է ամսաթիվը (երեխաները օրացույցի վրա գտնում են տվյալ օրը և օրացույցը ամրացնում են պատին):
- Ինչպե՞ս են անվանում օրացույցը, որը դրվում է սեղանին (սեղանի):
- Ինչո՞վ են նման օրացույցները (բոլորը ցույց են տալիս ամսաթիվը, ամիսը, շաբաթվա օրը, աշխատանքային ամիսը, շաբաթվա օրը, աշխատանքային, հանգստյան, տոնական օրերը):
- Ինչո՞վ են օրացույցները տարբերվում միմյանցից (ձևավորմամբ, չափերով, գույնով):
- Ո՞վ կարող է պատի օրացույցի վրա ցույց տալ իր ծննդյան ամիսը (օգնել դժվարացողներին):
- Երբ է սկսվում Նոր տարին :

Առաջարկել երեխաներին գտնել տարվա I ամիսը (սեղանների վրա դրված օրացույց)

Խաղ՝ - «Ով որտեղ է գտնվում»

Խաղը սկսել գնդակի նետումով, շրջան կազմած: Ընտրել խաղավար՝

Մեկ, երկու, երեք

Եկե՛ք խաղն սկսե՛նք,

Ամեն մեկին համրենք

Իմանա՛նք՝ ումից սկսե՛նք:

Խաղավարը գնդակը նետելով որևէ մեկին՝ հարց է տալիս.

- Ո՞վ է կանգնած քո ձախ կողմում, քո առջևում, քո ետևում, ո՞ր երեխաների միջև ես կանգնած, ի՞նչ կա քո գլխավերևում, քո առջևում. . .

Ճիշտ պատասխան տվող երեխան դառնում է խաղավար, և խաղը շարունակվում է:

Գործնական աշխատանք՝ - «Տարվա 4 եղանակները»

Դաստիարակ

- Ինչպիսի՞ գույներ ունեն տարվա 4 եղանակները:
- Ինչո՞վ են հայտնի դրանք:

Երեխաներին առաջարկել տարվա 4 եղանակները պատկերող 4 գունավոր մասերը փակցնել տրված շրջանի վրա:

- Տարին քանի՞ եղանակ ունի, որո՞նք են դրանք:

Շրջանը բաժանել 4 մասի, գունավոր կտրված մասերից ընտրենք հերթով տարվա եղանակները բնորոշող գույները և փակցնել շրջանի վրա: Երեխաների ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ տարվա եղանակները պատկերող գունավոր մասերը իրար հավասար են, ուրեմն տարվա 4 եղանակները իրար հավասար են:

Զբոսանք

Երեխաների ուշադրությունը կենտրոնացնել բնության փոփոխություններին: Հիշել բանաստեղծություններ ուշ աշնան և ձմռան գալու մասին:

Խաղ՝ - «Ծա՛փ և պտույտ»

Դաստիարակ՝ -

- 5-ը 6-ի նախորդն է (ծափ)
- 5-ը 6-ի հաջորդն է (պտույտ)
- 6-ը իր մեջ ունի 5 միավոր (պտույտ)
- 6-ից փոքր թվերն են՝ 5, 4, 3, 2, 1 (ծափ)

Դաստիարակի ճիշտ ասելու դեպքում ծափ են տալիս, իսկ սխալ ասելու դեպքում պտտվում են:

Խաղ՝ - «Մարզենք մեր միտքը»

Երեխաներին առաջարկել սեղաններին դասավորել 1-6 թվանշանները, առաջարկել հարցեր.

- Ո՞ր թվանշանն է շարքում առաջինը (մեկը)
- Ո՞ր թվանշաններ են կենտ (1, 3, 5)

- Ո՞ր թվանշաններ են զույգ (2, 4, 6)
- Ո՞ր թվերի միջև է գտնվում 6 (5, 7)
- Խոսել 6-ի կազմության մասին

6-ը կազմված է (6 հատ 1-ից, 1-ից և 5-ից), (2-ից և 4-ից և 3-ից և 3-ից):

Ապա՛ կռահիր

Դաստիարակ-

- Ո՞վ ավելի շատ տոտիկ ունի՝
1 սկյո՞ւռը, թե՞ 2 ագռավը.
(հավասար ե՞ն)

Ցանկապատի ետևից 4 կատվի տոտիկ է երևում.

Քանի՞ կատու կա այնտեղ

(1 կատու)

Խորանարդը զցել որ թիվը որ ցույց տվեց խոսել այդ թվի մասին (մինչև 6-ը)

(զույգ է, կենտ է, թվի նախորդը, թվի հաջորդը, թվի կազմությունը, ի՞նչ գիտենք

այդ թվի հետ կապված).

(1-ունենք 1 գլուխ, 1 քիթ, 1 բերան. . .)

(2- ունենք 2 աչք, 2 ականջ, 2 ձեռք, 2 ոտք . . .)

(3- մեր դրոշը եռագույն, լուսակիրը ունի 3 գույն. . .)

(4-տարին ունի 4 եղանակ, օրը բաղկացած է 4 մասից. . .)

Դաստիարակ՝ - Պարապմունքի ընթացքում կիրառված բազմաբնույթ մեթոդների միջոցով ես հասա իմ առջև դրված խնդիրների լուծմանը:

2.1. Աշխատանք ծնողների հետ.

Պատմել ծնողներին՝ ինչ նոր բան են սովորել երեխաները: Առաջարկել տանը երեխաների հետ դիտել օրացույցները, նշել ընտանիքի անդամների ծննդյան օրերը և երեխային հանձնարարել հետևել օրացույցին:

2.2. Դիտարկումներ

Դիտարկողների վերլուծություն

Պարապմունքի մասին իր կարծիքն է հայտնում տնօրենը

Դաստիարակի անցկացրած պարապմունքը «Օրացույց» թեմայով ծառայեց երեխաների՝ օրացույցի մասին գիտելիքների ամրապնդմանը ու զարգացմանը: Դժվարացող երեխաների հետ կատարվեց անհատական աշխատանք:

Դաստիարակը իր հետևողական աշխատանքի արդյունքում հասավ իր առջև դրված խնդիրների լուծմանը:

Մեթոդիստ

«Օրացույց» թեմայի միջոցով դաստիարակը ամրապնդեց երեխաների գիտելիքները ժամանակի մեջ կողմնորոշվելու մասին: Համարյա բոլոր երեխաները մասնակցում էին պարապմունքին, նրանք պարապմունքի ժամանակ կարողացան կողմնորոշվել ժամանակի մեջ: Պարապմունքի միջոցով երեխաները գաղափար կազմեցին օրացույցի նշանակության ու դեպի օրացույցի նշանակության ու դերի, օրացույցի տեսակների մասին: Պարապմունքը հագեցած էր դիդակտիկ նյութերով ու խաղերով, որը ծառայեց իր նպատակին:

Դժվարացող ու պասիվ երեխաների հետ տարվեց անհատական աշխատանք:

Պարապմունքի ժամանակ երեխաները ազատ էին, ակտիվ: Նրանք տրված հարցին պատասխանում էին պարզ ու հասկանալի: Պարապմունքի միջոցով երեխաները սովորեցին չափել ժամանակը, կողմնորոշվեցին ժամանակի մեջ, զգացին ժամանակի տևողությունը:

Նրանք սովորեցրին, որ յուրաքանչյուր ժամանակահատված ծառայում է որպես չափման միավորը հաջորդ ժամանակահատվածի համար:

Դաստիարակը յուրաքանչյուր երեխայի հետ աշխատեց նրանց ընդունակություններից ելնելով:

Դաստիարակը իր աշխատանքի միջոցով հասավ իր առջև դրված խնդիրների լուծմանը:

Եզրակացություն

Ի տարբերություն մյուս մեթոդների՝ մաթեմատիկական հասկացությունները արդյունավետ է ուսուցանել որոշակի համակարգով և հաջորդականությամբ: Նոր նյութը նպատակահարմար է անցկացնել պարապմունքի առաջին կեսին՝ հենվելով երեխաների ունեցած գիտելիքների վրա: Թեման հարկավոր է մատուցել փոքր բաժիններով՝ պարբերաբար կրկնելով անցածը, ընտրելով բավարար քանակի վարժություններ և գործելով երեխաների ուսումնական մակարդակին համապատասխան: Երեխաների հետ տարվող աշխատանքները տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման պարապմունքների ժամանակ պետք է լինեն տարաբնույթ՝ զրույցներ, դիդակտիկ և գործնական խաղեր, կառուցողական աշխատանքներ (տեղադրում, չափում, համեմատում, թվարկում, կտրատում, գումարում, հանում...)

Եվ այս ամենը պետք է բխի երեխաների տարիքային առանձնահատկություններից ելնելով և համապատասխանի ուսումնական գործունեության կազմակերպման դիդակտիկ պահանջներին: Պարապմունքի ժամանակ պետք է ապահովվի տարածք խաղային և ուսումնական գործընթացը համատեղելու համար:

Երեխաները կարող են միավորվել մի խմբում՝ սեղանների շուրջ նստած, կամ բաժանվեն ենթախմբերի, զույգերի, աշխատեն անհատական զննական նյութով, զրուցեն, խաղան շրջանի մեջ կամ գորգի վրա:

Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման պարապմունքների անհատականացումը ապահովում է յուրաքանչյուր երեխայի զարգացման անհատական տեմպը:

Պահպանելով սերտ կապ ծնողների հետ օգնել երեխաներին առօրյա կյանքում բացահայտել մաթեմատիկական ունակությունները:

Գրականության ցանկ

1. Ս. Չիբուխչյան «Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման պարապմունքները մանկապարտեզի ավագ խմբում»: Ուսումնական ձեռնարկ Երևան 2014թ. (էջ 3-5) և (էջ 60-64)
2. Հ. Հ. Կ. Գ. Ն. Կ. Ա. Ի.
«Մանկապարտեզի կրտսեր առաջին խմբի (2-3 տարեկանների) կրթական համալիր ծրագիր» Երևան 2013թ. (էջ 74-75)
3. Հ. Հ. Կ. Գ. Ն. Կ. Ա. Ի.
«Մանկապարտեզի կրտսեր երկրորդ խմբի (3-4 տարեկանների) կրթական համալիր ծրագիր» Երևան 2011 թ. (էջ 74-76)
4. Հ. Հ. Կ. Գ. Ն. Կ. Ա. Ի.
«Մանկապարտեզի միջին խմբի (4-5 տարեկանների) կրթական համալիր ծրագիր» Երևան 2011թ. (էջ 81-82)
5. Հ. Միտոյան, Լ. Մանուկյան, Ռ. Առաքելյան «Մանկապարտեզի ավագ խմբի (5-6 տարեկանների) կրթական համալիր ծրագիր» Երևան 2008 (էջ 84)